կաս. 3 չապիկ։ Ս. Յովհաննէս եկեղեցւոյ՝ 1 լէհ չիթ վարագոյր. 1 տիպայ գոգնոց։ Ս. Թորոս եկեղեցւոյ՝ 1 արծաթ ոսկեզօծ սկիհ. 1 տիպայ գոգնոց։ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ՝ 2 տիպայ գոգնոց. 1 լէհ չիթ վարագոյր. 2 քարեայ աշտանակք մոմեղինօք։ Ս. Փրկիչ եկեղեցւոյ՝ 1 տիպայ գոգնոց. 1 զոյգ քարեայ աշտանակ մոմեղինօք։ Ս. Աստուածածնի գերեզմանին՝ 1 տիպայ գոգնոց. 1 սաղավարտ. 1 վարշամակ. 3 չապիկ։ Ս. Ծննդեան եկեղեցւոյն՝ 1 շուրջառ. 1 սաղավարտ. 1 վարշամակ. 4 չապիկ. 1 լէհ չիթ վարագոյր։ Ս. Գէորգ եկեղեցւոյն 'ի Ռեմլէ՝ 1 շուրջառ. 1 սաղավարտ. 1 վարշամակ. 1 փորուբար. 3 չապիկ. 1 արծաթ բուրվառ։ Ս. Նիկողայոս եկեղեցւոյն Յոպպէի՝ 1 շուրջառ. 1 սաղավարտ. 1 վարշամակ. 1 փորուբար. 4 չապիկ. 1 լէհ չիթ վարագոյր։ Իսկ բարեպաշտուհի տիկին Նորին Սողոմէ՝ արար յիշատակ զՎերնատունն կանանց 'ի տաճարին Ս. Յարութեան՝ 2 տիպայ գոգնոց. 1 չիթ լէհ վարագոյր, քանդակագործ և ոսկիզօծ շրջանակն պատկերի Խաչելութեան հանդէպ Գերեզմանին Քրիստոսի, որոց յիշատակքն օրհնութեամբ եղիցի, (1751)։

Ի սմին ամի պատահեցաւ դարձեալ վէճ ընդ այլազգիս Սիոնի սակս գերեզմանատան, զի որդիք եւ ժառանգք Շէյխ Ահմէտ Տէմէնեայ բողոք բարձեալ առ դատաւորն, ամբաստան եղեն զերից ազգաց քրիստոնէից, Հայոց, Յունաց, եւ Լատինաց, իբրու թէ խոտորեալ են յորոշեալ սահմանաց գերեզմանատանց, եւ մտեալ 'ի սահմանս կալուածոց հաւուն իւրեանց, թաղեն անդ զմեռեալս, և թէ սահմանքն այնոքիկ որոշեալ էին 'ի թուին ١١٢٣ օրինօք դատարանի առաջի փոխանորդաց երից ազգաց, և խընդրեցին վերստին ելանել 'ի քննութիւն, և 'ի բաց հանցեն 'ի գերեզմանաց զմեռեալս, զորս թաղեալ են արտաքոյ սահմանացն, և ըստ օրինի կարգաւորել զգերեզմանատեղիս։ Կոչեցան 'ի դատարան փոխանորդք և թարգմանք երից ազգաց. Յովհաննէս վարդապետ և թարգմանն Պօղոս Ետուն պատասխանի՝ քրիստոնեայք ոչ են յափշտակեալ զիրաւունս այլոց, և ոչ խոտորեալ 'ի սահմանաց իւրեանց, զի 'ի ժամանակին յայնմիկ նախնիք ձեր ոչ կամեցան ունկն դնել ճայնի քրիստոնէից, այլ ինքեանք որոշեցին զսահ-